

2. Մուրադյան

ԲԱՌԱԳԻՅԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՐՃԵԼԱՆԻ ԲԱՐԲԱՌԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինչպես որ ամեն մի լեզվի զրավոր բառարանը լրիվ կերպով չի արտացոլում նրա բառային կազմը, այնպես էլ հնարավոր չէ մի բարբառի բառարանի մեջ ներկայացնել նրա բառապաշարի ամբողջությունը: Նման դժվարությունը ոչ թե սուրյակտիվ, այլ օրյակտիվ պայմանների հետևանք է: Ո՞ր կողմ թողնելով այն հանգամանքը, որ ոչ մի բարբառագիր, ինչքան էլ նա աշխատում է այդ ուղղությամբ, չի կարողանում լրիվ ընդգրկել ավելի բարբառի բառապաշարը, պետք է նկատի ունենալ նաև այն, որ բարբառները լինելով բանավոր լեզուներ և փոխանցվելով սերունդից սերունդ, բավարարվում են ընդհանուր լեզվի բառապաշարի այն մինիմումով, որ անհրաժեշտ է հաղորդակցման համար: Հասկանալի է, որ այս տեսակետից բանավոր լեզուն չի ունենում հոմանիշների այնպիսի առատություն, բարդ հասկացություններ արտահայտող բառերի այնպիսի մի ճոխություն, որպիսին հատուկ է զրական և զրավոր լեզուներին: Ինչպես է, որ բարբառների մեջ, նրանց զարգացման զարկը տեսած պատմության ընթացքում ստեղծվել ու զործածվել են հազարավոր բառեր՝ կապված պատմական տարբեր շրջանների հասարակական, քաղաքական, կուլտուրական, արտադրական, կենցաղային և այլ պայմանների հետ, բայց քանի որ այդ բոլորը ոչ մի տեղ չի զբաղեցվել, ուստի և զբաղյալ հանդաժախորեն անհետացել են հին հասարակական, քաղաքական, կուլտուրական և այլ պայմանների անհետացման հետ միասին: Դեռ այսօր էլ, բարբառախոս տարբեր սերունդների ներկայացուցիչների բառապաշարի մեջ, կարելի է նկատել որոշակի տարբերություններ, այդ արտահայտվում է նրանով, որ երիտասարդ սերնդի ներկայացուցիչների բառապաշարում բացակայում են այնպիսի բառեր, որոնք առկա են ավագ սերնդի ներկայացուցիչների մոտ: Դրանք հիմնականում հին կյանքի, հասարակական հին հարաբերությունների ու հին կենցաղի հետ կապված բառեր են, որոնք այլևս նոր պայմաններում չեն օգտագործվում և, բնականաբար, չեն փոխանցվի երիտասարդ սերնդին և ավագ սերնդի ներկայացուցիչների հետ միասին էլ կանհետանան:

Բանավոր լեզվի այս առանձնահատկությունն է պատճառը, որ մեր բարբառներից յուրաքանչյուրի բառապաշարը իր քանակով, հիմնականում, մի քանի հազար բառից այն կողմ չի անցնում:

Չնայած բանավոր լեզվի վերը նշած առանձնահատկությանը, այնուամենայնիվ բարբառը, որպես ընդհանուր լեզվի ճյուղավորումներից մեկը, բոլոր ժամանակներում էլ հիմնականում պահպանում է ընդհանուր լեզվի բառային հիմնական ֆոնդի բառերը և զբաղյալ հիման վրա է, որ բառաստեղծական իր ներքին միջոցներով ստեղծում է նորանոր բառեր, համալրում իր բառային կազմը և այդ հիմքի վրա ապահովում հաղորդակցման իր դերը:

Բարբառի բառապաշարի ուսումնասիրության տեսակետից ուշադրու-

թխան արժանի են այն կազմող բառաշերտերը: Տվյալ գեպքում մեզ հետաքրքրող կարճևանի բարբառի հիմնական բառաշերտերն են.

ա) բառեր, որոնք ընդհանուր են հին հայերենի (գրաբարի) բառարանի հետ.

բ) բարբառային բառեր, որոնք իրենց հերթին բաժանվում են երկու ենթախմբի.

1. Հին հայերենից ավանդված արմատներից կամ բառերից կազմված բարբառային ձևեր, որոնք, սակայն, այն ձևով, ինչպես նրանք ներկայանում են բարբառում, ավանդված չեն մեզ հին հայերենից:

2. Չուտ բարբառային բառեր, որոնց ծագումը գեոնես անհայտ է.

գ) փոխառություններ, որոնք կատարված են բարբառի կողմից ինքնուրույն ճանապարհով:

Քննենք այս բառաշերտերի արժեքը առանձին-առանձին:

Հին հայերենի հետ ընդհանուր բառերի քանակը հասնում է շուրջ 1500-ի: Այս բառաշերտը բարբառի բառային հիմնական ֆոնդի անբաժանելի մասն է կազմում: Այս շերտի մեջ են մտնում ամբողջ հայերենի համար ընդհանուր այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ հա՛լին (<աղի), հիլե՛վուր (<ալեւոր), ծիլի (<ածելի), դո՛ւնծիլ (<աղանձել), ախչիկ՛ (<աղջիկ), իլի (<ալի), տծ (<ալծ), նա՛լի (անալի), հա՛նիծ (<անիծ), բո՛ւնա՛տ (<առնէտ), հա՛րիլ (<աշրենալ), հա՛րդա (<արդի), ա՛րիվ (<արև), ո՛րճոճ (<արճիճ), ա՛լիլ (<աւել), քա՛ցի (<աքացի), բէհ (<բահ), բէ՛մբալ (<բամբակ), բէ՛նջար (<բանջար), բէ՛սնիլ (<բառնալ), բէց (<բաց), բո՛ն (<բոլն) բարդ (<բորդ) և այլն և այլն:

Ուշադրով է ախտեղ այն, որ հայերենի համար ընդհանուր մի շարք արմատներ կամ բառեր բարբառում հանդես են գալիս իրենց արմատական ձևով կամ իմաստային նրբերանգներով: Այսպես, օրինակ՝ ուտք հասկացություն համար հայերենում ունեցել ենք ուտն բառը, որը պահպանվել է հայերենի շատ բարբառներում, ինչպես և մեր գրական լեզվում, սակայն բարբառումս այն փոխարինված է հաք բառով, որը ներկայացնում է արմատը իր անաղաղտ ձևով, որ ավանդված է մեզ արաբի, ուղաքիլ և նման բառերում: Ատամ հասկացության համար գործածվում է կլե՛ռիք, բառը, որը հին հայերենում (կեռիք ձևով) ուներ «կենդանիների առամ, ժանիք, ճանկ» իմաստը: Մատն (ձեռքերի և ոտքերի վերջավորություններ) հասկացության համար գործածվում է բաթ (<բաթ) բառը, որ գրաբարում ունեցել է «մեծ մատ» իմաստը և այլն, և այլն: Այս երևույթը ուշագրավ է այն տեսակետից, որ այն կարող է որոշակի հիմք տալ ինչպես պատմական բարբառագիտության, այնպես էլ հայերենի համեմատական բառագիտության հարցերը մշակելիս:

Բարբառի բառապաշարի երկրորդ հիմնական բառաշերտի, այն է՝ բարբառային բառերի առաջին ենթախմբի քանակը այն բառերն են, որոնք կազմված են հին հայերենում ավանդված արմատներից ու բառերից, սակայն այնպիսի ձևով, որոնք ավանդված չեն հին գրականության մեջ: Նշենք դրանցից մի քանիսը. կրիսա տակ ռե՛լստտակ, բարձո (զլսի + տակ), մրշա՛հալ թթիկի մեջ ապրող մի թռչուն» (մռչ + հալ), ջիրա՛ ծրէտ ժի տեսակ ջրալին ծիտ» (ջուր + ծիտ), գո՛ղկապ ժիղկապություն» (զող + կապ), թրո՛նա՛կաթ «կաթսայի տակ գրվող երկաթյա ձող» (թոնիր + երկաթ), խո՛ւնսխո՛նի «թոնրի կրակը խոսնելու ձող, թոնիրխոսնիչ» (թոնիր + խոսնիչ), ալուրա՛-

սօն շրջադաշտարի առջևի արկղը, ուր թափվում է ալյուրը (ալիւր + տուն), մըշէ՛ջնիւր ակարմիր լորուց պատրաստվող մի տեսակ ջրիկ կերակուր, (մաշ + ջուր), հըտամաղ սմաղի մի տեսակ (հետ + մաղ), իըջա՛փատ ակողովածն փեթակի ներսում դրվող խաչածն փայտ՝ մոմաթերթի փոխարեն (խաչ + փայտ), պընդա՛ն թիցան (պինդ + ա՛ն), մըղա՛ն սմղիչ գործիք (մուղ + ա՛ն), ծըխկովիլ սծաղիկներից կապած ավել (ծաղիկ + աւել) և ալլն, և ալլն:

Բարբառային բառերի երկրորդ ենթախումբը ալն բառերն էին, որոնք իրենց ծագմամբ դեռևս անհայտ են: Կասկածից դուրս է, որ ալդ բառերի մեծագույն մասը հայերեն բառեր են, որոնք. սակայն, մեր հին մատենագրության մեջ չեն ավանդված: Այդ բառերի մի մասը դործան են նաև հայերենի ալլ բարբառներում, որը նույնպես վկայում է նրանց հայկական բնույթի մասին: Բերենք դրանցից մի քանի օրինակներ՝ րիմթիմօ՛կ թթարթիչ, փեշտ սառվի թումբ, իիցիփի՛շի սմանր հատիկներով ձյունախառն անձրև, խոլտըրօ՛կ սաղամախնձոր, կետ սճանճի մի տեսակ, որ կաշում է անասունների պոչի տակից և նրանց անհանգստացնում, կե՛տիլ սփախչել, ճուկու՛րուկ սփորսող կենդանի, ճուկ՛տիկ, ակարճ ակոս և ալլն:

Բարբառիս բառապաշարի այս երեք շերտերը, ալն է՝ հին հայերենի հետ ընդհանուր բառերը, հայերենի արմատներից կազմված բարբառային բառերը և անհայտ ծագում ունեցող բարբառային բառերը, կազմում են Կարճեանի բարբառի բառապաշարի հիմնական մասը: Փոխառյալ բառերը ինչպես քանակով, այնպես էլ որակով նույն արժեքը չունեն, ինչ նշված բառաշերտերի բառերը:

Փոխառությունների մեջ փոխատու հիմնական լեզուներն են պարսկերենը, ադրբեջաներենը և ուսերենը:

Բացի ալն, որ բարբառս ունի իրանական հին փոխառություններ, որոնք ընդհանուր են հին հայերենի հետ (և մենք այդ պայմանականորեն փոխառություններ չենք համարում) և գալիս են հնագույն ժամանակներից, ինչպես օրինակ՝ աղաա, աղգ, ախոռ, ալիշ, ամբար, աշխարհ, աշկարայ, ապապարել, աստառ, արձակ, արնիմ, բամբակ, բարակ, բժիշկ, բրինձ, գազար և ալլն, նոր ժամանակներում ինքնուրույն ճանապարհով պարսկերենից վերցրել է մի շարք բառեր: Պարսկական փոխառությունների մեծագույն մասը ընդհանուր է ադրբեջանական ձևերի հետ: Այս տեսակետից շատ անգամ դժվար է պարզել, թե պարսկական ծագում ունեցող բառերը անմիջական փոխառություններ են պարսկերենից, թե կատարված են ադրբեջաներենի միջնորդությամբ: Այնուամենայնիվ, որպես պարսկական ծագման բառեր, մենք այդ փոխառությունները դնում ենք պարսկական փոխառությունների մեջ:

Հայերենը պարսկերենից փոխառած ունի աշկարայ բառը: Բարբառումս բացի դրան համապատասխան՝ ալիա՛րա՝ ձևից, գոյություն ունի նաև ալիա՛րա բառը, որը կազմված է ալի նախածանցով: Թեև այդ բառաձևը ժամանակակից պարսկերենում ավանդված չէ, բայց բառաձևը ինքնին նշում է նրա պարսկական ծագումը:

Այստեղ դնում ենք պարսկական փոխառությունների մի փոքրիկ բառացանկ.

ալլավ «բող» պրսկ.

عالم (alav)

բիլյա բուռ «խալառակ» պրսկ.

بی آبرو (bi abru)

դա՛րզի զեկրձակ» պրսկ.	درزی (darzi)
դարվազա՛ զարբառ» պրսկ.	دارواز (darvāze) քաղաքի, ամ- րոցի դարբաս»
դոն՛շման թիշնամի» պրսկ.	دشمن (došman)
խի՛լլա շշատ» պրսկ.	خیلی (xeili)
դաս՛տա տիունջ» պրսկ.	دسته (daste)
բալ թխադդի ալգի» պրսկ.	باع (baʔ) ժալդի»
բուխա՛րի պատի մեջ օջախ» պրսկ.	بخاری (boxari)
թա՛մբալ թծուլ» պրսկ.	تنبال (tambal)
և ալլն, և ալլն:	

Աի շարք բառեր, որոնք իրենց ծագմամբ արաբական են, դործուն են նաև պարսկերենում և թերևս պարսկերենի միջնորդությունը են մտել բարբառի մեջ. այսպես, օրինակ՝ ջըղար (սալ) — պատասխան (տալ), դո՛ւլ — վարսավիր, դա՛սաբ — մագործ, ղը փըլ — կողպեք, դո՛ւլան — խանութ և ալլն:

Բառալին փոխառությունների մեջ մեծ քանակ են կազմում ադրբեջաներենից կատարված փոխառությունները: Դրանց քանակի գերակշռությունը ալլ լեզուներից կատարված փոխառություններից՝ բացատրվում է նրանով, որ բարբառի կրողները դարևր շարունակ գտնվել են ադրբեջանական լեզվական միջավայրում, անտեսական ու քաղաքական սերտ հարաբերություններ են ունեցել այդ լեզվի կրողների հետ: Դրա արդյունքը եղել է այն, որ մի շարք հասկացությունների հայերեն անուններին զուգահեռ սկսել են դործածության մեջ մտնել ադրբեջաներեն անունները և ժամանակի ընթացքում կորցնելով հայերեն ձևերը, դործածության մեջ մնացել են միայն փոխառյալ ձևերը: Այսպես են մտել բարբառի մեջ այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ բիրդա՛ն «հանկարծ», բիրա՛դի «միասին, մեկտեղ», բո՛ղաղ «կոկորդ», բոյ Շհասակ», դա՛րան «կրունկ», դինջ Շհանդիստ», բա՛մուզ «մաքուր», դո՛ղ Շհիշտ, հարթ, հարթություն, ուղիղ» և ալլ շատ բառեր, որոնց հայերեն ձևերը անհետացել են, ուստի և այդ փոխառյալ ձևերը միակ ձևերն են այդ հասկացությունների համար:

Ադրբեջաներենից կատարված փոխառությունների առանձնահատկությունն այն է, որ այդ լեզվից փոխառված բառերն այն աստիճան հարազատ են դարձել բարբառին, որ դրանց սկզբնաձևերից հայերենի ածանցներով կազմվել են նոր բառեր՝ բայական և ղոլական առումներով. մի բան, որ նկատելի չէ ոչ պարսկերենից և ոչ էլ ռուսերենից կատարված փոխառություններում: Այսպես, օրինակ՝ դինջ Շհանդիստ ածականից ածանցմամբ ստեղծվել է դինջե՛նիլ Շհանդստանալ» բայը, դինջո՛ւթին Շհանդստություն» ղոլականը, թա՛մուզ ածականից՝ թիմիդիլ ժամքրել», թիմիդո՛թին ժամքրություն» և ալլն:

Այս երևույթը թեև խիստ տարածված չէ, սակայն եղած օրինակներն էլ ապացուցում են, որ ադրբեջանական փոխառությունները բարբառի բառաֆոնդում ավելի կայուն տեղ են զբաղեցրել, քան ալլ տիպի նոր փոխառությունները:

Ահա ադրբեջաներենից կատարված փոխառյալ բառերի մի քանի օրինակներ՝

ա՛ղղըմ — քալլ	դամիբչի՛ — դարբին
ալջա՛գլ — ձեռնոց	դա՛վա — ուղտ
բօղ — դուրբի	դավա՛չի՛ — ուղտապան
գ՛ալգիգլե՛լն — մադի մի տեսակ	դա՛րա — ձոր
	դօշ — կուրծք
	և ալլն:

Վերջին հարյուրամյակի ընթացքում բարբառս փոխառություններ է կատարել նաև ուսերենից: Այդ փոխառությունները կրում են անմիջական բնույթ և ընդգրկում են կոնկրետ առարկաների անուններ:

Կարճևանցիների շփումը ուս ժողովրդի հետ կատարվել է երկու ուղղությամբ: Նախ՝ իրենց հայրենիքից դուրս, ուսական միջավայրում: Ցարական կարգերի օրոք գյուղացու անապահով վիճակը նրան ստիպում էր դիմել պանդխտության՝ փող վաստակելու և բախտ որոնելու հույսերով: Այդ նպատակով կարճևանցիները դիմում էին գեպի անդրկովկասյան և միջին-ասիական քաղաքները՝ Բաքու, Թիֆլիս, Տաշկենտ, Սամարգանդ և այլուր: Գտնվելով բազմազգ ալդ քաղաքներում, ուր միջազգային լեզուն ուսերենն էր, հաղորդակից լինելով հասարակական նոր հարաբերություններին և նոր կենցաղին, սովորելով ալդտեղ իրենց համար նորություն հանդիսացող երևույթների կամ առարկաների անունները, տուն վերադառնալիս իրենց հետ բերում էին և դրանց անունները:

Կարճևանցիների շփումը ուս ժողովրդի ներկայացուցիչների հետ կատարվել է նաև իրենց հայրենիքում: Որպես Իրանին սահմանամերձ գյուղի բնակիչներ, կարճևանցիները շարունակ շփման մեջ են եղել ուսական սահմանապահ ջոկատների զինվորների և սպաների հետ:

Այս երկու ճանապարհներով կատարված փոխառությունները ունեն զուտ կուլտուրական բառերի փոխառության բնույթ:

Ահա ուսերենից կատարված փոխառյալ բառերի մի քանի օրինակներ՝ ալիու՛շկա լուսամուտ, պատուհան» — ուս. ОКОШКО

ա՛տած հարկ» — ուս. ЭТАЖ

բօ՛շկա տակառ» — ուս. БОЧКА

լամբ լումպ ապակյա՛ նավթի» — ուս. ЛАМПА

կազեթ լրագիր» — ուս. газе́та

կրանց ժորակ» — ուս. кран

շկափ պահարան» — ուս. шкаф

շիօլ դպրոց» — ուս. школа

շպի՛շկա լուցկի» — ուս. спичка

ստա՛քան բաժակ» — ուս. стакан

և ալլն, և ալլն:

Բ ա ռ ա կ ա զ մ ու թ յ ու ն

Կարճևանի բարբառը օգտագործում է հայերենի բառակազմական բոլոր միջոցները: Սակայն ալդ բոլորի մեջ ամենից կենսունակը բարդությունները (հարադիր բարդություններով հանդերձ) և ածանցումներն են:

Բարդություններ

Բառերը բարդվում են ինչպես ա հոդակապով, այնպես և առանց ա հոդակապի.

ա) Ա հոդակապով բարդ բառերի օրինակներ.

ալուրա՛տօն ջրադացի քարի առջև դրված արկղ, ուր թափվում է ալ-
յուրը:

ածա՛նազ ժայռահաղ, բեկ-բեկ հաղ:

գետա՛քար Շենոնային գետի ողորկ, ամուր քար:

դըրքա՛մաջ Շողան ևրկու փեղկերի միջև կղած տարածությունը:

ծիրնա՛չիբ ժծիրանի չիր:

ակնակա՛յի ժաչքակապուկ խաղի մի տեսակ:

դըրքա՛տակ Շողան տակը, առջևը և այլն:

բ) Առանց ա հոդակապի բարդությունների օրինակներ.

գո՛ւղկալ ժմիղկապություն:

դո՛գուլա՛ման զգալների աման (որ նախկինում գործվում էր ճյուղե-
րից՝ ձվածե դամբլուդի ձևով):

ընըրաղա՛ ժաներոջ սղա, աներձագ:

ընչա՛վիլ Շունչավիլ, ևրկար ավիլ՝ առաստաղի և պատերի ունջը մաք-
րելու համար:

թուրանիս՛նցի թժոնրախառնիչ, ևրկար ձող՝ թոնրի կրակը խառնելու
համար:

խա՛չփատ ժխաչփալտ, կողոված փեթակի ներսում դրվող խաչփալտ՝
ժոմաթերթի փոխարեն:

կըլու՛ռիցք՝ ժանգինա հիվանդությունը, կոկորդի ուռուցք
և այլն:

դ) Բարդ բառեր կազմվում են նաև սեռական հոլովով դրված բառի
նախադրությամբ, որը որպես որոշիչ բացատրում է հաջորդ բառը: Բարդու-
թյան այս ձևը այնքան էլ տարածված չէ. բնորոշ են հետևյալ օրինակները.

ասո՛ւ գ'օխտիկ՝ ժանձրևաորդ:

դըրքը՛վըլօ՛խ Շողան վերևի փայտը:

ընըրքըսակ՝ ժամանի քսակ:

ծըօրպրտօ՛կ ժստինքի պտուկ և այլն:

դ) Բառակազմական մի այլ միջոց է արմատի կամ բառի կրկնությամբ
կազմվող բարդ բառերը: Բարբառս այդպիսի բարդ բառերով շատ առատ է.
Բերենք դրանցից մի քանի օրինակներ.

Բիբի՛ն՝ Շրլիլալ, բլրլոցով վառվել:

Բիբի՛ն՝ ք՝ Շրլլոց, բլրլոցով վառվելը:

գինգ՛գինգօ՛կ ժի տեսակ վայրի բանջար:

թիմթիմօ՛կ ժթարթիչ (կոպի):

լիլի՛կ՝ ժպահատոցի խաղը:

օլլօլլա՛լ ժծործորալ և այլն:

ե) Ավելի առատ են հարադրությունները.

ակնը օակ ագահ, անկուշտ:

զըկըռոտ գուլ զգլոտալ:

թուլ արիլ զլորել, թավալել:

թուլ գուլ զլորվել, թավալվել:

լօք տալ զցատկել:

կ'անիչ-կ'արմիր թծիածան:

կըլօխ ցա'նիլ հասկանալ, գլխի ընկնել:

ծլու'լ ցա'նիլ զկախվել (խլինքի, սառուլցի կտորի մասին):

Մ.Ա.Որոյնը. — Հարադրություններ կազմվում են նաև փոխառյալ բառերից. ինչպես՝

ջրղա'ր տալ պատասխանել:

յօրմիշ գուլ հոգնել:

բիյա'րուռ արիլ խալտառակել և այլն:

Ածանցներ

Օգտագործվում է միան մի նախածանց. դա հայերենի ան ժխտական նախածանցն է. օրինակ՝ ա'ննօնդ թանծալի, անվերջ, անսկիզբ ու անվերջ, ա'նտար թանտեր, տեր չունեցող, ա'նհամ թամ չունեցող կամ տհաճ համ ունեցող, ա'նխիլք հիմար, անխելք և այլն:

Առատ են վերջածանցները. ահա դրանք.

1. -օթին, — որով կազմվում են վերացական գոյականներ, ինչպես օրինակ՝ հիլիվըրօ'թին թալեորություն, ծերություն, զիղօ'թին զոդություն, ըիպըրօ'թին ճեղքալություն, ըրիսօ'թին թուրախություն, երեսալություն և այլն:

2. -եգի, -ցի, — որոնցով կազմվում է որտեղացի ցույց տվող գոյականներ, ինչպես, օրինակ՝ ուրդ յ'թցի թորդուրացի, մըղրե'ցի մեղրացի, կըր-նընլե'ցի զկարճանցի, տըրտընե'ցի թաշտունցի, հիգիլիկեցի թագաբանացի և այլն:

3. -ացու, — որով կազմված գոյականը ցույց է տալիս ինչ նպատակի, ինչ բանի հատկացված լինելը. ինչպես՝ տըրխա'ցու թորխացու, միսա'ցու մսացու, կունա'ցու խոճացու, գերան, ա'իջիկա'ցու շղարշացու, տի-նալա'ցու զառուրմացու և այլն:

4. -ան, — սրանով կազմվում են գոյականներ, ինչպես՝ մուղա'ն մողիչ գործիք (մուղ արմատից), պըզզա'ն մանկական սրինգ (պըզզ բնածայնական արմատից), պըլկա'ն մանկական մի խաղալիք (պըլկ բնածայնական արմատից), պընղան խցան (պինդ արմատից), շըռոան շըրի թափվելու տեղը, շըվեթիլ (շըռ || շիռ բնածայնական արմատից) և այլն:

5. -օտ, — որով կազմվում են ժառանգանունների անուններ. ինչպես՝ խի-ն-նիլ օտ թանձորենուտ, ծիրի-ն-նիլ օտ թորանուտ, տըն-ն-նիլ օտ թանձենուտ, ղըն-ն-նիլ օտ թուռենուտ և այլն:

6. -ի, — այս ածանցով կազմվում են ժառանգանուններ. ինչպես՝ ա'նգուզ — ընգըզի՝ ընկուզենի, քօք — քըքի՝ թթենի, ծա'րան — ծիրանի՝ թծենի, գիլա'ս — գիլիսի՝ զկուսենի, շտա'ղուլ — շտըղի՝ զեղենի և այլն:

7. -ակ, — որով կազմվում են գոյականներ. ինչպես՝ հիլիկ'ակ զլացքի

կալի տաշտ» (անկան բառից), ըռջընակ ժանդրանկածին» (ըռջի՝ առաջին բառից), ղըռնա՛կ ճհնձանի քարի լուսամուտ» (ղռնն բառից), կըլօլ՝ակ ճքուֆտա» (կլոր բառից), պըրկօնակ ճղամբուլի պարկուճ» (պարկուն բառից) և այլն:

8. -անք, — կազմվում են գոյականներ, ինչպես՝ չըրչա՛րանք ճչարչա-րանք», բիմբե՛սանք ճբամբասանք», զըրթե՛րանք ճգարդարանք», դա՛չանք ճաղաչանք, աղերսանք» և այլն:

9. -իկ, — որով կազմվում են գոյականներ հայերենի միավանկ գոյականներից, ինչպես՝ բի՛բիկ ճբիր», ի՛լիկ ճիլ», իըշտի՛կ ճիշտ, սվի՛ն» ճրոնի՛կ ճճիո, խաղողի մի քանի պտուղից կազմված ողիւլց», պըլի՛կ ճպարող մարդ»:

10. -աք՛, -եք՛, -իք՛, — սրանցով կազմվում են.

ա) Բայարմատով գոյականներ, ինչպես՝ օրլլա ք՛ թծորալը, ծորումն», ծըվվա՛ք թծորտոց, ճչոց», կըծալըծա՛ք թկծածանք», կըկըլա՛ք ճ1. դալլալլ. 2. կըկըց. 3. անհոգ ծիծաղ», ղըլղի՛ք ճիռուտուտ» և այլն:

բ) Ազգայնական, արլունակցական կապ ցույց տվող գոյականներ, ինչպես նաև ազգանուններ. ինչպես՝ հե՛րաք՛ ճհոր ընտանիքը», քիլ՛ե՛րաք՛ ճքրոշ ընտանիքը», տա՛լաք՛ ճամուսնու քրոշ ընտանիքը», մի՛րա՛մ աք՛ ճԱրհամայնները», Ըղե՛ք՛ ճԱղայանները», Զա՛նիք՛ ճՋանխանները» և այլն:

11. -ավուց, -ալի, — կազմվում են ածականներ, որոնք ցույց են տալիս որե՛է հատկանիշ ունենալը, ինչպես՝ կաղաղա՛վուց թկեղեւավուր (ընկուլց)», կիրմիրա՛վուց ճեարմրութլուն ունեցող», սըմա՛լի ճսերմ ունեցող», սըվ սլի ճսևութլուն ունեցող» և այլն:

12. -վարի, — կազմվում են մակբայներ, ինչպես՝ կընղալա՛րի ճկնոշ պես, կանացիորեն», մարդալա՛րի ճմարդու պես, կորեկտ, քաղաքավարի», քաղաքավա՛րի ճքաղաքացու պես» և այլն:

13. -ալ (դործիականի վերջավորութլուն է) — կազմվում են ինչպես ածականներ, այնպես էլ մակբայներ, ինչպես՝ հա՛ցալ ճհլուրտսեր», հա՛քսվ ճարագաշարժ, արագընթաց», ցա՛շտալ ճանօթի», բիշո՛րալ ճառավորտյան» և այլն:

14. -իշտ, — կազմվում են գոյականներ, ինչպես, օրինակ՝ հոն՛րիշտ-ճփոքր քթոց» (ոտոն ճքթոց բառից), յե՛րկիշտ ճերկասլրանի եղան՝ ցաք կտրելու համար»:

15. -կուտ, -ուտ, — որոնցով կազմվում են ածականներ, ինչպես՝ ոըմա՛նչկուտ ճամաչկուտ», վա՛խկուտ ճվախկուտ», քիփուտ ճթեփուտ», քա՛սուտ ճքոսուտ», վըսկըռու՛տ ճոսկրուտ» և այլն:

16. -աց, — որով կազմվում են մակբայներ, ինչպես՝ շուղվա՛ց ճվաղուց», ղիբաց ճերբ, երբվանից», իրե՛կնց ճերեկ» և այլն:

17. -օկ, — կազմվում են գոյականներ, ինչպես՝ գիհօ՛կ ճոչխարների ձմեռանոց» (գիհ բառից), գիհնձիհնձօ՛կ ճմի տեսակ վայրի բանջար» (գիհն բառից), թիմբիմօ՛կ ճթարթիչ» (թիմ արմատից?) և այլն:

Ի մ ա ս տ ա փ ո խ ու ը յ ու ճ

Որպես հայերենի ճյուղավորումներից մեկը կարճևանի բարբառը հիմնականում պահպանել է հայերեն բառերի իմաստները: Նույնիսկ հաճախում են այնպիսի բառեր, որոնք պահպանել են հին հայերեն բառի հին իմաստը:

այն ժամանակ, երբ նոր հայերենում դրանք հանդես են գալիս իմաստային նոր երանգներով: Այսպես, օրինակ՝ մանրել բառը գրաբարում ունի «մանրացրել, ջարդել, փշրել, ջարդաբուրդ անել» իմաստները: Այդ նույն բառի մեջ, ժամանակակից հայերենում երկրորդական պլանի վրա են մղված ջարդելու, փշրելու իմաստները, և բառը հիմնականում կրում է «մանրացնել, մանր կտորների բաժանել, մանր մասերի բաժանել» իմաստները: Բարբառային մ.Անդիլ (<մանգրիլ<մանրել) բառը պահպանել է հին հայերեն բառի հիմնական իմաստները. այն է՝ «ջարդել, կտրել, փշրել»: Կամ մի ալլ օրինակ՝ ընտրել բառը հին հայերենում ունի «զատելով ընտիրը վերցնել» ժամանակակից հայերենում ալլ բառը իմաստային նոր երանգավորում է ստացել, որ ավելի սկսում է գերիշխել սկզբնական իմաստի վրա. ալլ քվեարկությամբ որե՛ն պետական կամ ղեկավար օրգան ստեղծելը կամ քվեարկությամբ մեկին որե՛ն ղեկավար պաշտոնի մեջ առաջադրելն է» (օրինակ՝ կոլխոզի նախագահ ընտրել, ղեկուսատ ընտրել, պարտիական կոմիտե ընտրել, Դերագույն Սովետ ընտրել և այլն): Նույն ընտրել բառի բարբառային ճընղըրի՛լ համարժեքը ունի «զատելով ընտիրը վերցնել, ընտիրը զատել անպետքից, ջոկել անպետքը լավից», այսինքն՝ հիմնականում պահպանել է իր հին իմաստը:

Սակայն միշտ չէ, որ բառերը պահպանել են իրենց հին իմաստները: Մի շարք բառեր ժամանակի ընթացքում իմաստային նուրբ երանգներ են ստացել. այդ երանգները առաջացել են հիմնականում բառի իմաստներից միայն մեկի պահպանմամբ ու զարգացմամբ, երբեմն էլ մի ալլ երևույթի նմանությամբ:

Այդ երևույթները պարզելու համար քննենք մի շարք բառերի իմաստային փոփոխությունները:

Հին հայերենում գործի բառը ունի «1. գործիք, 2. բնական գործիք, գործարանք, 3. բարոյական գործիք, միջնորդ, միջոց, առիթ» իմաստները: Դրանցից ժամանակակից հայերենում ունենք գործիք ընդհանուր բառ հասկացությունը: Բարբառում ալլ բառը հանդես է գալիս գ.գործին ձևով և նշանակում է «արոր», այսինքն՝ գործիքներից միայն մի տեսակի անունը: Հայերենի համեմատ այստեղ կատարվել է իմաստի նեղացում, այսինքն՝ իմաստի անցում է կատարվել ընդհանուրից դեպի կոնկրետը, մասնավորը:

Նույնպիսի երևույթ կատարվել է նաև թան<թան բառի մեջ: Այն հին հայերենում ունի «թաց ուտելիք, ապուր» իմաստը, մինչդեռ բարբառում իմաստի նեղացմամբ՝ «մածուն»:

Հին հայերեն պարկուճ բառը ունի «դրսի կեղև պարկի տեսք», ալլ ընդհանրական իմաստից բարբառիս պըրկոճակ բառը ստացել է «դամբուլենու փուչ, պարկածն պտուղը» նեղ նշանակությունը: Կամ գուր «փոս» բառը բարբառում զիվ ձևով նշանակում է «հնձանի մեջ այն փոսը, ուր թափվում է ճգմված խաղողի հյութը»:

Իմաստի նեղացման երևույթ նկատվում է նաև փոխառյալ բառերի մեջ: Օրինակ՝ պարսկերենից փոխառյալ լաղ բառը, որ պարսկերենում ունի «ալգի, պարտկ» նշանակությունը, այստեղ ստացել է «խաղողի ալգի» նեղ իմաստը:

¹ Այս և մյուս օրինակներում հին հայերեն բառերի իմաստները վերցված են Առ ձևն բառարանից:

ընդհանուր ժայգի» հասկացություն համար գործածվում է հայերեն ի՛գի<այ-գի բառը:

Իմաստի նեղացման դրսևորումներից մեկն էլ այն է, երբ բառերը պահպանել են հին հայերեն բառի իմաստներից միայն մեկը: Հաճախ պատահում է, որ պահպանված այդ իմաստները հին հայերեն բառի ոչ թե հիմնական, այլ երկրորդական իմաստներն են, որոնք բարբառիս մեջ զարգանալով դարձել են հիմնական ու մոռացության մատնել մյուս իմաստները: Այսպես, օրինակ, վաստակել բառը հին հայերենում ունի 1. աշխատել, տառապել, ջանալ, 2. հոգնել» նշանակությունները: Բարբառումս դրան համազոր վըստա՛կիլ բառը պահպանել է միայն ճեղքնել» նշանակությունը: Հին հայերեն ինդրել նշանակում է 1. փնտրել, ուզել գտնել, 2. հարցնել, քննել, 3. պահանջել, 4. ուզել, աղաչելով ուզել: Բարբառային իընդի՛լ համազորը պահպանել է այդ իմաստներից միայն թուզել, ցանկանալ» նշանակությունը: Կամ թե՛ վերցնենք կոփել բառը: Այն հին հայերենում նշանակում է ձգարնել, տաշել, կոկել, որ կապվում է հիմնականում խփելով տաշել, կոկել, հղկել իմաստների հետ: Բարբառային Կու՛փիլ բառը պահպանել է հենց այդ հիմնական իմաստը խփել, զարկել, հարվածել (ձեռքով, գործիքով, քարով, հրագեղով և ամեն ինչով, որով հնարավոր է հարված հասցնել): Իմաստային նույնպիսի անցում է տեղի ունեցել նաև պրկել>պըրկի՛լ բառում: Այն ունեցել է 1. պիրկ կապել, կապկապել, քաշկոտել, 2. քաշքշելով երկարացնել» նշանակությունները: Քանի որ այս բառը առաջացել է պիրկ արմատական ձևից, ուստի և բառի հիմքում ընկած է ամուր դարձնել, ամրացնել իմաստները: Ամրացնելու իմաստից էլ անցում է կատարվել դեպի փակելու, ծածկելու իմաստները: Այժմ բարբառային պըրկիլ բառը նշանակում է փակել, ծածկել» օրինակ՝ դու՛րքը պըրկե՛ — դուռը ծածկիր:

Բառերի իմաստափոխություն կատարվել է նաև երեուլթների նմանություն հետևանքով: Այսպես, օրինակ՝ ցայտ, որից և ցայտել բառերը, բարբառային ցեթ և ցե՛թիլ ձևերով նշանակում են ժմեղ, միգել: Իմաստային այս անցումը կատարվել է երեուլթի արտաքին նմանությամբ:

Նույնպիսի երեուլթի արդյունք է ծանրանալ>ծընդըրե՛նիլ ճեղհանալ, հղի լինել» իմաստի առաջացումը, որ գործածելի է միայն կենդանիների համար:

Այս բոլորին հակառակ բարբառիս բուք բառը, որ նշանակում է ժատ» (ձեռքերի և ոտքերի վերջավորություններ), իմաստային տեսակետից անցում է կատարել մասնավորից դեպի ընդհանուրը, քանի որ բոյք բառը հին հայերենում ունի ժմեծ մատ» նշանակությունը:

Իմաստի շրջման հետաքրքիր օրինակ է տալիս կապել>կա՛պիլ բառը: Նա ընդհանուր լկապ դնել, հանդուցել» իմաստների հետ միասին ունի և հակառակ իմաստը՝ քրաց թողնել, արձակել» (ջրի մասին): Իմաստի նման շրջումը կատարվել է այդ բառի լուրօրինակ գործածությամբ:

Ջրի սակավության պայմաններում, երբ ջրի խնայողությունը անհրաժեշտություն էր դառնում, գյուղացիները մեկի վրա պարտականություն էին գնում հա՛լաք՛իլ առ՛ի ջրերը և այն հասցնել մինչև հեռավոր այգիներն ու արտերը: Այդ մարդը կոչվում էր մըտկա՛պան(<մատակապան — առվի պետ): Մասակապանը ջրերը հավաքելու համար, սկսած առվի ակունքից, կապում, փակում էր ջրաբաժան բոլոր անցքերը և ջուրը տանում էր դեպի իր նպա-

տակը: Այդ գործողությունը կոչվում էր մա'տալը կա'պիլ (առուն կապել), որ նախապես նշանակելով առվի ջրաբաժան անցքերը կապել, իր անմիջական հետևանքով այժմ ստանում է առավով ջուր թողնել, առավով ջուր բաց թողնել: Այդ կոնկրետ իմաստից էլ զարգանում է կապել բառի ավելի ընդհանրացած իմաստը՝ ջուրը բաց թողնել, ջրի կապանքը արձակել: Այնպես որ, այժմ, երբ կարճևանցին ուզում է ասել՝ ջուրը բաց թող՝ (դա վերաբերի առվին, թե ծորակին, միևնույնն է), ասում է՝ ջուրը կա'պա, որտեղ կապել այլևս ոչ թե նշանակում է սկսել զննել, փակել, այլ ընդհակառակը՝ բաց թողնել, արձակել:

Առնել, վերցնել հասկացությունների համար օգտագործվում են ա'ռիլ, յե'ռիլ, յեմ ա'ռիլ բառերը: Ըստ էության սրանք առնուլ բառից առաջացած տարբերակներ են, բայց ունեն իմաստային նուրբ տարբերություններ: Առաջինը ունի ընդհանուր առնել, զննել, եր'րորդը՝ մի տեղից մի որևէ բան վերցնել, իսկ երրորդը՝ «որևէ մեկի մոտից մի բան վերցնել» իմաստները:

Նկատելի է, որ բառերը իրենց բազմիմաստությունից աստիճանաբար աղատվել և դարձել են մենիմաստ: Այդ ձգտմամբ է պայմանավորված ախ, որ վերը շարադրված բառերից շատերը, պահպանելով հին հայերեն բառի միայն մի իմաստը, կորցրել են մյուսները: Սակայն չնայած այդ ընդհանուր ձգտմանը, այնուամենայնիվ, հանդիպում են նաև բազմիմաստ բառեր, որոնց բազմիմաստությունը թերևս պայմանավորված է ընդհանուր հայերենի ազդեցությամբ: Այսպես, օրինակ՝ ա'ծիլ՝ 1. լցնել, թափել (հեղուկ). 2. նվազել (երաժշտական գործիք). 3. ձուլ զննել, Բիլի'թ — 1. րլիթ, խմորեղեն, թխվածք. 2. պանրի մեծ կտոր րլիթի նման. 3. մեղրի հաց: Թօռ — 1. թաց, խոնավ. 2. անձրև: Լափ — 1. խիստ, շատ, հույժ. 2. բոլորովին. 3. հենց: Կըռնա'տակ — 1. թեի տակը. 2. թեի տակ տեղավորելու չափ: Շօռ գուլ — 1. շրջադայել, ման գալ, զրոսնել, շրջել. 2. ճանապարհորդել. 3. փնտրել:

Բազմիմաստություն ունեն նաև մի շարք փոխառյալ բառեր, ինչպես, օրինակ, աղբրեջաներենից փոխառյալ դուզ — 1. ճիշտ, ճշմարիտ. 2. ուղիղ (գծային մեծությունների մասին). 3. հարթ. 4. հարթություն: Բօլ — 1. հեղիք, բավական. 2. շատ, առատ: Այս իմաստները հենց աղբրեջաներենից էլ անցել են բարբառին:

Հայերենի բարբառների, և ոչ միայն բարբառների, բառիմաստների փոփոխությունների ուսումնասիրությունը շատ հետաքրքիր բնագավառ է, որը, սակայն, մեր գիտության մեջ առ այսօր մնում է չհաղթահարված: Ընդհանուր փոքրիկ տեղեկությունները նույնպես ոչնչով չեն ծածկում եղած այդ բացը:

*

Ընդհանրացնելով Կարճևանի բարբառի վերաբերյալ վերը շարադրված բառագիտական համառոտ տեղեկությունները, կարելի է նկատել, որ այս բարբառը իր բառապաշարի շերտերով, բառակազմական միջոցներով ու բառերի իմաստային կողմով հայերենի հետ իր ընդհանրություններով հանդերձ հանդես է բերում նաև յուրահատուկ կողմեր, որոնք այդ բարբառը, որպես ընդհանուր հայերենի ճյուղավորումներից մեկի, ինքնուրույն ու անկախ զարգացման հետևանք են: Այդ յուրահատուկ կողմերը արտահայտվում են հատկապես բարբառի բառակազմական միջոցներով կազմված բառերում, որոնց հիմքում ընկած ինչպես հայերեն բառերն ու արմատները, այնպես և փոխառյալ բառերը, ձևափոխվում են հայերենին հատուկ ածանցներով և նրա քառարարդման կանոններով: